<<Նոր ժամանակների կրթություն>> ՀԿ

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթաց

Ավարտական հետազոտական աշխատանք

Հետազոտության թեման՝ Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Լ. Մամրեյան

Ուսումնական հաստատություն՝ <<Արտաշատի ավագ դպրոց>> ՊՈԱԿ

Երևան 2022

Բովանդակություն

1.Բովանդակություն……1

2.Ներածություն……2

3.Հայ ժողովրդական հերոսական էպոսի վերլուծությունը…….3

4. <<Սասունցի Դավիթ >> էպոսի գաղափարախոսության վերլուծությունը տարբեր մեթոդների միջոցով…….5

5.Եզրակացություն……..14

6.Օգտագործված գրականության ցանկ…….15

Ներածություն

Ազգային էպոսներն յուրաքանչյուր ժողովրդի երազանքներն արտահայտող գրական հուշարձաններն են, որոնք ուղեկցում են ազգի հետագա ընթացքին՝ հիշեցնելով, թե ինչ է դնում <<հայրենիք>> արբազան հասկացության մեջ տվյալ ժողովուրդը:

Ըստ օտարազգի էպոսագետների՝ <<Սասունցի Դավիթը>> աշխարհի լավագույն էպոսներից մեկն է, իսկ ըստ ֆրանսիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդիի, որը 1964-ին թարգմանել ու հրապարակել է էպոսը ֆրանսերենով, հայկական ազգային էպոսն անզուգական է:

Մի՞թե հավերժորեն ճշմարիտ չէ՞, որ ժողովուրդները պետք է ապրեն խաղաղության ու բարեկեցության մեջ:

Ուսումնասիրելով այս թեման՝ ուզում եմ պարզել.

- որքանո՞վ են սովորողները գնահատում հայրենիքի դերը
- ինչ են հասկանում պահպանել հայ ընտանիքի ավանդույթները ասելով
- ունենալ անկախ հայրենիք
- խաղաղ գոյակցել աշխարհի այլ ժողովուրդների հետ

Հետազոտության հարց՝ Ի՞նչ մեթոդներով կարելի է ուսուցանել հայ ժողովրդական էպոսի արդիական լինելը

Հայ ժողովրդական հերոսական էպոսի վերլուծություն

Հայ ժողովրդական բանահյուսության մեջ իրբացառիկ տեղն է գրավում <<Սասնա ծռեր>> հանճարեղ դյուցազներգությունը: Այն կազմավորվել է դարերի ընթացքում տարբեր սերունդների ստեղծագործական ջանքերով՝ գեղարվեստորեն իմաստավորելով ժողովրդի կյանքում ճակատագրական նշանակություն ունեցող պատմական մեծ իրադարձությունները: Ժողովրդական վիպասացների բազում սերունդների ջանքերով դյուցազնավեպը բազմիցս հղկվել է, հարստացել նոր գեղարվեստական նկարագրություններով և հասել մեզ:

<<Սասնա ծռեր>> դյուցազներգության մեջ արտացոլված գաղափարներն ու տրամադրությունները համահունչեն ժողովրդի ազգային աշխարհընկալմանը: Էպոսը ներկայացնում է հայ ժողովրդի հավաքական մտածողությունն ու ձգտումները, աներեր կամքն ու ազգային-բարոյական կողմորոշումը:

<<Սասնա ծռերի>> հյուսվածքում իրապատում և հրաշապատում նկարագրությունները հաճախ ի հայտ են գալիս միմյանց զուգորդված: Ստեղծագործությունն արտացոլում է հայ ժողովրդի ազգային բնավորությունը, իմաստությունն ու դարերիընթացքում ձեռք բերած կենսափորձը, ազատասիրական ոգին ,կենցաղն ու բարքերը;Սասունցի չորս հերոսների պայքարի պատկերմամբ ընգծվում է այն միտքը, թե օտար նվաճողներիդեմ հայության պայքարը եղել է հարատև՝ ընդգրկելով բազում սերունդների կյանք: Վեպի գլխավոր հերոսներից յուրաքանչյուրինբանասացը կոչում է Սասնա ծուռ, այսինքն՝ հանդուգն, ուղղամիտ և խենթի նման կամակոր կտրիճ: Գլխավոր հերոսները օժտված են գերբնական ուժերով: Օտար նվաճողներին մշտապես հաղթող,ազգի անվտանգությունը ապահովող մեր հերոսները առաջնորդվումեն միայն բարի մղումներով, արդար մարդկան օգտակար լինելու պատրաստակամությամբ: Այսպես՝ Սանասարն ու Բաղդասարը ձեռնամուխ են լինում առաջնահերթ տներ կառուցել իրերնց մոտ ապաստանած աղքատ մարդկանց համար, այնուհետև կառուցում են իրենց բերդը.

<< Սանասար ասաց Բաղդասարին.
–Առաջ զմեր բե՞րդ շինենք,
Թե չէ՝ զէդա աղքատ-ուղքատի տներ;
Բաղդասար պատասխանեց.
–Առաջ շինենք զէդոնց տներ,
Ու նոր շինենք զմեր բերդ.
Էդ խեղճ մարդեր չեն կարնա
Արևուն առջև կենա:
Ու սկսեցին զտներ:>> :(Սասունցի Դավիթ համահավաք բնագիր)

Իմանալով,որ Հալեպիցեկող ճանապարհի վրա հայտնվել է մի առյուծ, որի պատճառով անհնարին է դարձել ալյուրի ներկրումը Սասուն, Մեծ Միերը

անմիջապես շտապում է սպանելու գազանին և փրկելու սասունցիներին վերահաս սովից.

<< Միերն ասաց .-Քեռի, Առյուծն ինչ է, իմալ առյուծ:
Ասաց . – Գազաններու ջոջն է առյուծ . մարդիկ կուտի:
Միեր հարցուց .- Հեռվանց կուտի,
Թե՝ մոտենաս , ու նոր կուտի:
Քեռին թե՝ մոտենաս ու նոր:
Միերն ասաց .- Էդպես է՝ ես լուսուն կէրթամ:
Քեռին ասաց.- Որդի, չէրթաս, քեզ կը ջարդի:
Ականջ չարավ, գնաց :>> :(Սասունցի Դավիթ համահավաք բնագիր)

Արքայադուստր Ծովինարն էլ զոհում է իրեն հանուն հայրենիքի ու իր ժողովրդի փրկության և համաձայնում է ամուսնանալ Բաղդադի խալիֆի հետ.

<<Որ իմ հերն իմանար,
Էսքան մեղք ու արունք չէր ձգի իմ վիզ, ինձ կը տար-
Իմ պատճառով էսա ամեն մարդ տի սպանեն,
նոնց տղաներ տի մնան որբ, ինձ տի անիծեն,
Վերջըն զոռով ինձ տի տանեն:
Աղեկն էն է, որ ես իմ կամքով էրթամ,
Իմ հոր թագավորությունն էլ հաստատ մնա:>>:(Սասունցի Դավիթ համահավաք բնագիր)

Առհասարակ՝<<Սասնա ծռերի>> բոլոր գլխավոր հերոսներն իրենց գերբնական ուժով,բարի գործերով ջանում են օգնել ազնիվ,աշխատասեր, արդար վաստակով ապրող մարդկանց: Հայ դյուցազներգությունը հաստատում է անձնուրաց, անդուլ, հերոսական պայքարով ու հաղթանակներով հայրենի երկրի ուժողովրդի անկախությունը պահպանելուգաղափարը:

Էպոսի գեղարվեստական ու գաղափարական արժանիքներն առավել ցայտուն արտահայտվել են էպոսի երրորդ ճյուղում:Էպոսում ունենալով միանգամայն ինքնուրույն բովանդակություն՝ թվում է, թե առաջին, երկրորդ և չորրորդ ստեղծվել են Դավթի կերպարը, էությունն ու գործերը գեղարվեստորեն առավել հիմնավորված ներկայացնելու նպատակով:

<<Սասնա ծռեր>> դյուցազներգությունն աչքի է ընկնում ծողորվրդական խոսքարվեստի բազմազան հնարքների գործածությամբ: Ստեղծագործության տարբեր էջերում նկատվում են և՛ վիպական հորինվածքին հատուկ նկարագրական դրվագներ, և՛քնարական հուզիչ հատվածներ:

<<Սասունցի Դավիթ >> Էպոսի գաղափարախոսության վերլուծությունը տարբեր մեթոդների միջոցով

Էպոսի գաղափարախոսությունը արդյո՞ք արդիական է:

- Սիրել հայրենիքը:

  Հայրենիքը մարդկային կյանքի նման գերագույն արժեք է: Հայրենիքը հողակտոր չէ, որի համար դարեր շարունակ պայքար է մղվում օտար նվաճողների դեմ: Հայրենիքը հայ ժողովուրդն է, մեր առօրյան, մեր ավանդույթներն ու բարքերը:Արդի ժամանակներում ևս հայրենիքի պաշտպանությունն ու հայ ժողովրդի անվտանգությունն առաջնային խնդիր են: Առաջնային են եղ ել նաև մեր էպոսի ողջ բովանդակության մեջ: Դյուցազներգության հերոսները մշտապես ապահովել են այդ երկուկարևորագույն պայմանները և մեր օրերում ևս շարունակում են կարևորվել խաղաության ու անվտանգության ապահովման միջոցները: Էպոսի դերը նշված հարցում առաջնայիններից մեկն է, ինչպես օրինակ պատմական ու բանահյուսական շատ այլ ստեղծագործություններ: Համեմատած պատմական ու բանահյուսական այլ ստեղծագործությունների հետ ` էպոսը , լինելով մշակված ու հղկված շատ հեղինակների կողմից, չի կորցրել իր գերագույն հատկանիշը. այն ներկայում է, որպես հայ ժողովրդի հավաքական մտածողություն: Էպոսում շատ են անձնազոհությունները հանուն հայրենիքի, որոնց մեծ մասը հիմնականում կանանց կողմից է: Ծովինարը գնում է անձնազոհության և ամուսնանում կռապաշտ խալիֆի հետ: Իրայդ քայլովնա փրկում է հայ ժողովրդին խալիֆի ցասումից, բայց պայման է դնում , որ նա պետք է շարունակի իր խաչը պաշտել:Իսկ օրինակ Արմաղանը դրժում է իր երդումը և արու զավակ է ունենում հանուն հայրենիքի ապագայի՝ հստակ գիտակցելով, որ երդումը դրժելու դեպքում ինքն ու իր ամուսինը ` Մեծ Միերը կզոհվեն:
  Հայրենիքի պաշտպանության գործում , ինչպես այսօր էպոսում ևս աչքի են ընկնում ոչ միայն տղամարդիկ, այլ նաև կանայք:Ինչպես օրինակ մեր օրերում շատ կանայք ու աղջիկներլծված են հայրենիքի պաշտպանության գործին, այնպես էլ Դեղձուն Ծամն է քառասուն տարի հսկում Սասունը Սանասարի մահից հետո :
  Սանասարն ու Բաղդասարը ծնվել էին Աստծո բխեցրած աղբյուրի ջրից, որն Աստված բխեցրել էր իրենց մոր հայրենիքում: Հայրենի հողից ու ջրից սերված լինելով՝ նրանք գերմարդկայինուժով են օժտված եղել:
  Դավիթը Մսըրում գտնվելիս չի ընդունել Իսմիլ Խաթունի կաթը և իր ողջ մանկության ընթացքում սնվել ու հասակ է առել իր հայրենիքից բերված մեղրի ու կարագի շնորհիվ: Այսօր ևս շատերը փաստում են այն մասին, որ հայրեհնքի ցամաք հացն ու ջուրը չեն կարող համեմատել աշխարհի ամենահարուստ երկրների խոհանոցներում պատրաստված ուտելիքների հետ:
  Էպոսը հաղորդում է հետևյալը .հայրենիքը կարևորագույն է և կարևորագույն է նաև նրա հետ առնչվող յուրաքանչուրը:

- Լինել աշխատասեր և մարդասեր:

Հատկանշական է այն փաստը, որ էպոսի գլխավոր հերոսները չնայած իրենց դիրքին ու փառքին միշտ էլ կարևորել են արդար աշխատանքը:
Դավթին Մսըրից վերադառնալուց անմիջապես հետո իր հորեղբայրը՝Ձենով Օհանը լծում է գյուղական արդար գործին,նրան հագցնում է հասարակ հագուստ, նույնիսկ երկաթե կոշիկներ,չնայած որ Դավիթը իրենց օրինական տերն ու տիրակալն էր:
Աշխատանքը էպոսում իր բնույթով շատ է տարբերվում արդի աշխատանքից, սակայն հինական գաղափարը էպոսում, որը չի ճանաչում ժամանակաշրջան աշխատասիրությունն է: Սանասարն ու Բաղբասարը իրենց բերդը շինելիս աշխատանքը հավասար են կատարում, մինչ դեռ Բաղդասարը զիջում էր եղբորը իր ուժով:
Դյուցազներգության մեջ իր ուրույն տեղն է զբաղեցնում աշխատասիրության քարոզը, բայց քարոզվում է ևս մեկ մարդկային հատկանիշ, որն էլ ավելի կարևոր է արդի ժամանակներում: Մարդասիրությունն է , որ էպոսում չի ճանաչում ո՛չ դիրք, ո՛չ էլ ունեցվածք: Նաև կարևոր նշանակությունունի հարգանքը տարեցների հանդեպ:
Սանասարն ու Բաղդասարը իրենց բերդիանունը դնում են ծերունի իմաստունի բերանից արտասանված առաջին բառով, նրան մեկ ամբողջ օր Սանասարը իր ուսերին դրած ման է տալիս ողջ բերդի շուրջը, նրա համար կերուխում են կազմակերպում և առաջարկում իրենց հետ ապրել: Էպոսի երրորդ ճյուղում Դավիթը, անկախ այն հանգամանքից ,որ Մըսրը մեր թշնամին է, բաց է թողնում մսրա զորքին լսելով ծերունու իմաստուն խոսքերը.

Դուք ըռանչպար մարդիկ ըսավ
Ձուրկ ու խավար, քաղցած ու մերկ,
Հազար ում մի կըրակ ու ցավ,
Հազար ու մի հոգսեր ունեք:

Ինչ եք առել նետ ու աղեղ,
Եկել թափել օտար դաշտեր,
Չէ որ մենք էլ ունենք տուն-տեղ,
Մենք էլ ունենք մանուկ ու ծեր…

…Դարձեք եկած ճանապարհով,
Ձեր հայրենի հողը Մսրա.
Բայց թե մին էլ զենք ու զոռով
Վեր եք կացել դուք մեզ վրա,

Հորում լինեք քառսուն գազ խոր
Թե ջաղացի քարի տակին,-
Կելնեն ձեր դեմ , ինչպես էսօր,

Սասմա Դավիթ, Թուր-Կեծակին:

Էն ժամանակ աստվածգիտի,
Ով մեզանից կըլնի փոշման.
Մենք, որ կելնենք ահեղ մարտի,
Թե դուք, որմեզ արիք դուշման… (Հ. Թումանյան << Սասունցի Դավիթ>> պոեմ)

Դավիթը ,երբ պետք է երեք անգամ հարվածեր Մըսրա Մելիքին, իր առաջին և երկրորդ զարկերը բաշխում է Մելիքի մորն ու քրոջը,քանի որ նրանք Դավթին պահել ու մեծացրել են Մըսրում: Այս քայլը ևս մարդասիրության և մեծերի հանդեպ հարգանքի արտահայտություն է:

Առաջ վազեց մազերն արծակ
Մելքի պառավ մայրը ջադու.
-Դավի՛թ, մազըս ա՛ռ ոտիդ տակ
Էդ միզարկը ինձ բաշխիր դու:

Երկրորդ անգամ թուրը քաշեց.
Էս անգամ էլ եկավ քուրը.
-Դավիթ, եթե կուզես,-կանչեց,-
Իմ սրտին զարկերկրորդ թուրը:

Չորրորդ ճյուղում Դավիթը այնքան է կարևորում հարգանքը տարիքով մեծերի նկատմամբ, որ իր որդու՝ Միհրի, հանդուգն պահվածքի համար վեճի է բռնվում նրա հետ՝ չիմանալով, որ այդ հանդուգն երիտասարդը իր որդին է և երբ պարզվում է, որ նա իր սեփական որդու հետ է կռվում, որ պես պատիժ նրան անիծում է ասելով.

<<Անմահ ըլնիս , անժառանգ:>> (Սասունցի Դավիթ համահավաք բնագիր)

Քառաբաժանում

1. (աշխատանք բնագրի շուրջ) Քառաբաժանման մեջ խոսքը «Սասունցի Դավիթ» էպոսի առաջին ճյուղի մասին է

Ձայներ	Երկու հիմնական արտահայտություն
1.Լսում եմ օտար հարկահանների ձիերի դոփյունը: 2.Ծովի ձայնը, որի ափին իր հայրենի եզերքին հրաժեշտ է տալիս Ծովինարը: 3.Ծովինարի՝ տագնապով լի որոշման ձայնը:	1.Ես մեկ ջան եմ, Էրթամ, կորսըվիմ: 2.Մերն ասաց քահանային. -Տերտեր, Իմ տղաներին դաս տուր՝ կարդան:
Հիմնական գաղափարը	**Տրամադրություն**
Հայրենիքի ճակատագիրն ավելի կարևոր է, քան անձնական կյանքը:	1.Հիացմունք Ծովինարի արարքի նկատմամբ: 2.Թախիծ հայրենի երկրից հեռանալու պատճառով: 3.Ուրախություն, որ տղաները փախուստով փրկում են իրենց կյանքը, խալիֆից ազատում են նաև իրենց մորը

Քառաբաժանում

2. (աշխատանք բնագրի շուրջ)

Տեսողական պատկերներ	Զգացում
1.Հայոց Գագիկ թագավորի պալատին են մոտենում խալիֆի հարկահանները: 2. Երիտասարդ ու շատ գեղեցիկ Ծովինարը: 3.Հայոց թագավորի պալատի խորհրդակցությունն աղջկա ամուսնության առթիվ: 4. Ծովինարը խմում է հանկարծակի բխած աղբյուրի ջուրը:	1.Ծովինարն իրոք շատ գեղեցիկ է: 2. Գագիկ թագավորը չի ուզում ամուսնացնել իր գեղանի դստերը կռապաշտ խալիֆի հետ 3. Հպարտություն Ծովինարի անձնազոհ արարքի համար:
Զուգորդում	**Նոր վերնագիր**
(համեմատում այլ ստեղծագործության հետ) «Սասունցի Դավիթ» էպոսի առաջին ճյուղը կարելի է համեմատել Մուրացանի «Ռուզան» դրամայի հետ: Երկու գրական ստեղծագործություններում էլ թե՛ Ծովինարը և թե՛ Ռուզանն այլադավան բռնակալի հետ ամուսնանում են հանուն հայրենի երկրի և ժողովրդի փրկության:	«Արքայադուստրը իրեն զոհում է հանուն հայրենիքի» կամ «Հայրենանվեր արքայադուստրը»

Կերպարի վերլուծության գծագիր

1.Ի՞նչ է անում հերոսը:

2.Ինչպե՞ս է կերպարը փոխվում:



3.Ի՞նչ է ասում կամ մտածում կերպարը:

Ուսուցչի կազմած հարցերի պատասխանների հերթականությունները պահպանում ենք ըստ գծագրի համարների հերթականության: Վերջում կտեղադրենք «Հակասություն» շրջանակի պատասխանները:

ա) Ի՞նչ է անում հերոսը

«Սասունցի Դավիթ» էպոսի գլխավոր հերոսը՝ Սասունցի Դավիթը, փրկում է Հայաստանն արաբական լծից:

բ) Ի՞նչ է ասում կամ մտածում հերոսը

Սասունցի Դավիթը ողջ էպոսի ընթացքում արտահայտում է բազմաթիվ իմաստուն մտքեր, որոնք այսօր էլ մեծ արժեք ունեն:

Գրի ենք առնում Դավթի իմաստուն մտքերն ու առանձնացնում դրանց մեջ ամենաէականները՝

1. Դավիթը բացատրում է, թե որևէ այլ երկիր իրավունք չունի խառնվելու իր հայրենիքի գործերին. ամեն երկրի գահակալ թող զբաղվի միայն իր երկրի գործերով.

- Դե, գնա, թագավորիդ բարև արա, ասա.
Էն Միհերի տղա Դավիթն էսպես արեց
. Մեկ էլ չը գա՝ Սասնա կընիկ, աղջիկ տանի՛.
Սասնա տուն դեռ չի ավերվե,
Որ դուք էկե մեզեն խարջ ու խարաջ կ'ուզեք:
Մըսրա գավառ իրեն, Սասնա գավառ մեզի:
Թե չէ՝ ինչ իրմեն կը գա, թող չը խնայի (էջ 210):

2. Դավիթն արթնացնում է Մսրա զորքին և միայն դրանից հետո է նետվում մարտի դաշտ:

3. Դավիթն ազատ է արձակում Մսրա Մելիքի զորքին և զգուշացնում, որ մյուս անգամ չգան Սասունի վրա, այլապես կպատժվեն, ինչպես Մսրա Մելիքը:

4. Դավիթը պատժում է իր վրա կռիվ եկած թշնամիներին, նրանց փոխարեն թագավոր է կարգում հասարակ մարդկանց և խոստանում պաշտպանել նրանց վտանգի պահին.

Քաղքի մեջ ով մնացեր էր,

Էնոնց համար թագավոր դրեց.

Ջոջ մարդեր սպանեց,

Պստիկներ տեղ դրեց, ասաց.

-Քանի դու ժիր եք, կռիվ միք է՛րթա:

Որ դու նեղ կը՛նկնեք,

Ինձի մի թուղթ գրեք, ես կը գամ (էջ 278):

գ) Ինչպե՞ս են ուրիշները վերաբերվում կերպարին

1. Դավթին սիրում են Սասունի հասարակ մարդիկ:

2. Դավթի համար սրտացավ է Ձենով Հովանը:

3. Դավթին ճիշտ ուղղության է մղում արտատեր պառավը:

4. Մսրա Մելիքն ատում է Դավթին և նրա մեջ տեսնում հավերժական թշնամի:

5. Դավթին սիրում էր Չմշկիկ Սուլթանը, սակայն Դավթի ու Խանդութի ամուսնությունից հետո նենգորեն սպանել է տալիս նրան:

6. Դավթին անամոթ առաջարկներ է անում և հետապնդում Ձենով Հովանի կինը՝ Սարիեն:

7. Դավթին անսահման սիրում էր կինը՝ Խանդութը, որը վերջինիս մահվանից հետո ինքնասպան է լինում:

8. Դավթի մահվան վրեժը հանում է որդին՝ Փոքր Մհերը:

դ) Ինչպե՞ս է կերպարը փոխվում

1. Դավիթը սկզբում շատ միամիտ էր:

2. Դավիթը լիովին փոխվում է, երբ արտատեր պառավը նրան խորհուրդներ է տալիս ու առավել բորբոքում հայրենասիրական կրակը:

3. Խանդութին տեսնելուց հետո Դավիթը դառնում է իր կնոջն անմնացորդ նվիրված ամուսին:

ե) Հեղինակի թեման կամ տեսակետը

Հեղինակը ժողովուրդն է, որ դարերի ընթացքում ավելի հղկել ու պանծացրել է իր սիրելի հերոսի կերպարը: Հազար անգամ իրավացի է ժողովուրդը, որի կարծիքով իդեալական մարդիկ չկան, եթե անգամ դա իրենց սիրելի հերոսն է՝ Սասունցի Դավիթը:

Ժողովուրդը ցավով ներկայացնում է, թե ինչպես շիտակ, ազնիվ, անձնազոհ, նվիրված Դավիթը մի անգամ սխալվում և երդմնազանց է լինում: Նա նշանված էր Չմշկիկ Սուլթանի հետ, սակայն Խանդութին հանդիպելուց հետո մոռանում է Չմշկիկ Սուլթանին տված խոստումը, և նենգ Չմշկիկն իրենց ընդհանուր աղջկա ձեռքով սպանում է Դավթին.

-Իմ ցեց իմ անձից է,

Էդ իմ սերմն էր, որ ինձի սպանեց:

Դավիթ էդ խոսք ասաց,

Ու ինքն էլ էնտեղ մեռավ (էջ 292):

Հակասություն

Դավթի կերպարում չկա հակասություն. նրա բնավորության գծերը և վարքագիծը խիստ ներդաշն են: Չնայած վիպական կերպար է, սակայն բոլորովին գրքային ու վերացական չէ, այլ կենսական է և օժտված բազմաթիվ իրական գծերով:

Եզրակացություն

<<Սասունցի Դավիթ>> էպոսը եղել և մնում է թե՛ դպրոցական և թե՛ բուհական ծրագրի կարևորագույն թեմա, և նրա ուսուցումը պահանջում է անհրաժեշտ հմտություն:

<<Սասնա ծռեր>> էպոսի դերը հայրենասիրություն և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում ահռելի է:

Դյուցազներգությունը իր մշակված ու հղկված լինելու հետ մեկտեղ չի կորցնում իր ասելիքը, որն է լինել հայրենասեր, մարդասեր, չենթարկվել օտար նվաճողներին, պահպանել ազգային ավանդույթներն ու բարքերը, ունենալ անկախ հայրենիք, խաղաղ գոյակցել աշխարհի այլ ժողովուրդների հետ:

Էպոսի ամենաբնորոշ գիծը հայ դյուցազունների անպարտելիության ոգին է՝ պայմանավորված էպոսի նախահիմքում ընկած առասպելական հերոսների սխրանքներով ու ոսոխների, հատկապես արաբական բռնակալության դեմ հայ ժողովրդի մղած դարավոր պայքարով:

Օգտագործված գրականության ցանկ

<<Սասունցի Դավիթ>>, հայկական ժողովրդական էպոս, Երևան, 1961թ.

Սրվանձտյանց Գ. Երկեր, հ. I, Երևան, 1978թ.

Աբեղյան Մ., Երկեր, Ը.